Հավելված 1

Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի 2022 թվականի
հունվարի 25-ի թիվ ԿԽ-001/22/3 որոշման

Ո Ւ Ս Ո Ւ Ց Մ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

ԴԱՏԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՔՐԵԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԲԱԺՆԻ՝ ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԵՎ ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՆԹԱԲԱԺՆՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ուսուցման սույն ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի՝ մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերի և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների ենթաբաժնում 2021թ. ընդգրկված անձի (այսուհետ՝ Ունկնդիր) մասնագիտական պատրաստման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, գնահատման եղանակը, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:
2. Ծրագիրը մշակվել է Արդարադատության ակադեմիայի կողմից՝ «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի հիման վրա:
3. Ծրագիրը նպատակաուղղված է Ունկնդրի մոտ մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործեր և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություններ քննող դատավորի պաշտոնում գործելու համար անհրաժեշտ կարողությունների, հմտությունների ձևավորմանը, մասնագիտական գիտելիքների ծավալի ընդլայնմանը հետևյալ ոլորտներում.
   - **Դատավորի էթիկա, վարքագծի կանոններ և գործունեության գնահատում,**
   - **Քրեական իրավունքի արդի հարցեր,**
   - **Քրեական վարույթի արդի հարցեր,**
   - **Դատական նիստի վարման և դատական ակտի մշակման հմտություններ:**

Ուսուցման գործընթացը նպատակաուղղված է դատավորի էթիկայի, վարքագծի կանոնների և գործունեության գնահատման, քրեական իրավունքի ոլորտում իրականացված և իրականացվող բարեփոխումների, քրեական օրենսգրքի նորմերի գիտական վերլուծության ու կիրառման արդյունքում բացահայտած թերությունները հաղթահարելու, քրեական իրավունքի տեսության և օրենսդրության ժամանակակից միտումներին համահունչ հայեցակարգային նոր կառուցակարգերի ու ինստիտուտների, քրեական դատավարությունում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննության, նյութական և դատավարական իրավունքի ոլորտում ՄԻԵԿ-ով երաշխավորված իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի որոշումների, ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների, ՀՀ նկատմամբ դրա կիրառման հարցերի, ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների բովանդակության (այդ թվում՝ Միավոր-

ված ազգերի կազմակերպության՝ մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերի, դրանց կիրառման առանձնահատկությունները, ինչպես նաև «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում ամրագրված իրավունքների, դրանց ներպետական օրենսդրությունում կիրառելիության և Կամընտիր արձանագրությամբ հասանելի դարձած ընթացակարգերի հարցերի), դատական քննության անցկացման և դատական ակտի մշակման հիմնահարցերի վերաբերյալ Ունկնդրի գիտելիքների ծավալի ընդլայնմանը, ինչպես նաև դատական վարույթ իրականացնելու, վերաբերելի իրավունքի վերհանման, վերլուծության և կիրառման համար անհրաժեշտ հմտությունների ու կարողությունների ձևավորմանը:

4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով:
5. Լսարանային ուսուցումն իրականացվում է հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլների հիման վրա՝ 86 ակադեմիական ժամ ընդհանուր ժամաքանակով:
6. Փորձաշրջանը կազմակերպվում է անհատական ծրագրին համապատասխան, որում ընդգրկվում են փորձաշրջանի ընթացքում պարտադիր կատարման ենթակա առաջադրանքներ: Փորձաշրջանի մեկ օրվա տևողությունը 10 ակադեմիական ժամ է: Փորձաշրջանի ընդհանուր ժամաքանակը սահմանվում է 120 ակադեմիական ժամ: Փորձաշրջանի ավարտին յուրաքանչյուր Ունկնդիր գնահատվում է դրական կամ բացասական:
7. Ուսումնառության ընդհանուր ժամաքանակը ունկնդրի համար սահմանվում է 210 ակադեմիական ժամ, որից 4 ակադեմիական ժամը նախատեսվում է քննաշրջանի համար:
8. Ուսումնառության տևողությունը սահմանվում է 1 ամիս (2022 թ. փետրվարի 25-ից մարտի 25-ը)՝ ներառյալ փորձաշրջանը: Դասընթացներն անցկացվելու են ուրբաթ և շաբաթ, փորձաշրջանը՝ երկուշաբթիից հինգշաբթի օրերին:

II. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Տևողությունը	Դասընթացների ժամաքանակ	Քննաշրջանի ժամաքանակ	Փորձաշրջանի ժամաքանակ	Ընդհանուր ժամաքանակ
փետրվարի 25-ից մարտի 25-ը	**86 ժամ** (4 դասընթաց) (փետրվարի 25-ից մարտի 19-ը)	**4 ժամ** (2 քննություն) մարտի 21-ից մարտի 25-ը	**120 ժամ** փետրվարի 28-ից մարտի 21-ը	**210 ժամ**
ԸՆԴՀԱՆՈՒՐ	**86 ժամ**	**4 ժամ**	**120 ժամ**	**210 ժ**

III.ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	JCP-G-001-22	Դատավորի էթիկա, վարքագծի կանոններ և գործունեության գնահատում	6
2.	JCP-S-001-22	Քրեական իրավունքի արդի հարցեր	10
3.	JCP-S-002-22	Քրեական վարույթի արդի հարցեր	60
4.	JCP-S-003-22	Դատական նիստի վարման և դատական ակտի մշակման հմտություններ	10
ԸՆԴՀԱՆՈՒՐ			**86**

IV. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. JCP-G-001-22. Դատավորի էթիկա, վարքագծի կանոններ և գործունեության գնահատում

Դասընթացը պայմանավորված է դատավորի էթիկայի, վարքագծի կանոնների և գործունեության գնահատման ոլորտում նոր իրավակարգավորումներով սահմանված չափանիշների ներկայացման, այս ոլորտում գիտելիքների ծավալի ընդլայնման և կատարելագործման անհրաժեշտությամբ:

Դասընթացի շրջանակում քննարկման առարկա կդառնան դատավորի էթիկայի կանոնները, գործունեության գնահատման չափանիշները և կարգը, դատավորի վարքագծի կանոններն ինչպես ի պաշտոնե գործելիս, այնպես էլ ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում, հատուկ անդրադարձ կկատարվի դատավորի ինքնաբացարկի հիմքերին, դրանց կիրառման առանձնահատկություններին, ինչպես նաև զանվածային լրատվության միջոցների հետ և այլ շփումներում դատավորի վարքագծի առանձնահատկություններին:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

2. JCP-S-001-22. Քրեական իրավունքի արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է քրեական իրավունքի ոլորտում իրականացված և իրականացվող բարեփոխումների, քրեական օրենսգրքի նորմերի կիրառման արդյունքում բացահայտած թերությունները հաղթահարելու, քրեական իրավունքի տեսության և օրենսդրության ժամանակակից միտումներին համահունչ հայեցակարգային նոր կառուցակարգերի ու ինստիտուտների, վիճահարույց հարցերի շուրջ ՄԻԵԴ, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ՝ հիմնական շեշտադրումը կատարելով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննության հարցերին:

Դասընթացը ներառում է՝

- հանցագործությունների որակման հիմնախնդիրները,
- արարքի հանցավորությունը, քրեական պատասխանատվությունը և պատիժը բացառող հանգամանքները,
- քրեական իրավունքի ոլորտում ՄԻԵԿ-ով երաշխավորված իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ իրավական դիրքորոշումները, ՀՀ նկատմամբ դրա կիրառման հարցերը, ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների բովանդակությունը (այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության՝ մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերը, դրանց կիրառման առանձնահատկությունները, ինչպես նաև «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում ամրագրված իրավունքները, դրանց ներպետական օրենսդրությունում կիրառելիության և Կամընտիր արձանագրությամբ հասանելի դարձած ընթացակարգերի հարցերը):

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ JCP-S-002-22 և JCP-S-003-22 դասընթացների հետ համատեղ:

3. JCP-S-002-22. Քրեական վարույթի արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է քրեական վարույթի նոր իրավական զարգացումների, քրեական դատավարության օրենսգրքի նորմերի կիրառման արդյունքում բացահայտված թերությունները

հաղթահարելու, քրեական դատավարության տեսության ու օրենսդրության ժամանակակից միտումներին համահունչ հայեցակարգային նոր կառուցակարգերի և ինստիտուտների, ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերի կիրառման գործնական հարցերի, վիճահարույց հարցերի շուրջ ՄԻԵԴ, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումների, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում սահմանված իրավակարգավորումների էության և տրամաբանության վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու համար՝ հիմնականում շեշտադրումը կատարելով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննության, այդ ոլորտին առնչվող իրավակարգավորումների էության և տրամաբանության վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու վրա:

Դասընթացը ներառում է՝

- մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության և օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման մասին միջնորդությունների քննության արդի հարցերը,
- ապացույցները և ապացուցման գործընթացի հիմնախնդիրները քրեական դատավարությունում,
- քրեական վարույթում դատական քննության անցկացման հմտությունները,
- դատաքննության անցկացման ձևին, այդ թվում՝ դատական նիստի ընթացակարգի պահպանմանը, հարցաքննությունների կատարմանը, ապացույցների հետազոտմանը, միջնորդություններին արձագանքմանը, ինչպես նաև դատավճռի կայացմանը վերաբերող գործնական հարցերը,
- վերանայման վարույթի առանձնահատկությունները,
- ՀՀ քրեական դատավարության առանձին ինստիտուտների վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները և դրանց կիրառման հիմնախնդիրները,
- ՀՀ քրեական դատավարության ոլորտում ՄԻԵԿ-ով երաշխավորված իրավունքների պաշտպանության անհրաժեշտ երաշխիքների ապահովման հիմնախնդիրները, դրանց վերաբերյալ ՄԻԵԴ իրավական դիրքորոշումները, ՀՀ-ում դրանց կիրառման հիմնարցերը,
- նշված հարցերի կապակցությամբ քրեական դատավարության նոր օրենսգրքի հիմնադրույթները,
- քրեական դատավարության սկզբունքների նոր համակարգը,
- քրեական դատավարության նոր հասկացութային ապարատը, հանրային և մասնավոր շահերի հավասարկշռված պաշտպանության նոր կառուցակարգերին վերաբերող հարցերը,
- Մեղադրյալի բացակայությամբ իրականացվող վարույթը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ JCP-S-001-22 և JCP-S-003-22 դասընթացների հետ համատեղ:

4. JCP-S-003-22. Դատական նիստի վարման և դատական ակտի մշակման հմտություններ

Դասընթացը պայմանավորված է քրեական դատավարությունում դատական քննության անցկացման, ինչպես նաև մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննության հմտությունների վերաբերյալ Ունկնդրի ելակետային գիտելիքների ծավալն ընդլայնելու և դրանք պատշաճ կենսագործելու, դատական ակտերի կառուցվածքին և բովանդակությանը ներկայացվող

պահանջների վերաբերյալ գիտելիքների ընդլայման կարողություններ ու հմտություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- դատարանի կողմից քրեական գործը վարույթ ընդունելու, նախնական դատալսումների ընթացքում ծագող գործնական հարցերը,
- հիմնական դատալսումների անցկացման ձևին, այդ թվում՝ դատական նիստի ընթացակարգի պահպանմանը, նյութերի հետազոտմանը, միջնորդություններին արձագանքմանը, ինչպես նաև դատական ակտի կայացմանը վերաբերող գործնական հարցերը,
- դատական վարույթների ընթացքում դատարանի կողմից կայացվող դատական ակտերին ներկայացվող կառուցվածքային և բովանդակային պահանջների վերաբերյալ գործնական հարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ JCP-S-001-22 և JCP-S-002-22 դասընթացների հետ համատեղ: